


## Չինվորական առաջնորդության կարեվորությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում

*Պարզյան Սամվել Ա.*

*Երևանի Միխիջար Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Ռազմաբժշկական ֆակուլտետ, համագորային ցիկլի դասախոս, պահեստագործի մայր (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0004-7278-0453>

[samvelparzyan.sp@gmail.com](mailto:samvelparzyan.sp@gmail.com)

*Պետրոսյանց Հրաչյա Տ.*

*Երևանի Միխիջար Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Ռազմաբժշկական ֆակուլտետ, համագորային ցիկլի դասախոս, պահեստագործի փոխգնդապետ (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0001-9033-0403>

[petrosyants.hrachya@gmail.com](mailto:petrosyants.hrachya@gmail.com)

ՀՏԳ՝ 355/359; EDN: GBWRXO

DOI: 10.58587/18292437-2025.2-23

Հանգուցարաներ և բառակապակցություններ՝ զինվորական առաջնորդություն, առաջադրանքային կառավարում, Հայաստանի Հանրապետության զինված ուժեր

### **Важность военного лидерства в вооруженных силах Республики Армения**

*Парзян Самвел А.*

*майор запаса, преподаватель цикла общевоинской подготовки,*

*Военно-медицинский факультет,*

*Ереванский государственный медицинский университет им. Мхитара Гераци (Ереван, РА)*

*Петросянец Рачья Т.*

*подполковник запаса, преподаватель цикла общевоинской подготовки,*

*Военно-медицинский факультет,*

*Ереванский государственный медицинский университет им. Мхитара Гераци (Ереван, РА)*

**Аннотация.** Цель статьи-представить опыт внедрения «военного лидерства» в Вооруженных Силах Республики Армения и пути дальнейшего развития. любые знания, в том числе повышение квалификации, которые военнослужащий получает во время своей службы, включаются в его программу профессиональной подготовки:

Военные лидеры руководствовались чертами характера, личным примером и всегда выступали в качестве пионеров благодаря своей деятельности, направленной на непрерывное обучение, развитие и профессиональный рост. они достигают совершенства, когда их подчиненные дисциплинированно выполняют свой воинский долг, выполняют поставленные перед ними задачи, руководствуются существующими военными ценностями и традициями: Словосочетание "военный лидер" можно понимать двояко. Во-первых, когда мы имеем в виду лидера, то есть в целом мировоззрение, систему ценностей, самооценку субъекта лидерства (военного коллектива), внутреннее осмысление собственной деятельности. Во-вторых, само лидерство рассматривается как определенная социальная деятельность, вид межличностного общения.

**Ключевые слова и словосочетания:** военное руководство, управление задачами, вооруженные силы Республики Армения

### **The Importance of Military Leadership in the Armed Forces of the Republic of Armenia**

*Parzyan Samvel A.*

*reserve major; teacher of the cycle of combined arms training, Military Medical Faculty,*

*Mkhitar Heratsi Yerevan State Medical University (Yerevan, RA)*

*Petrosyants Hrachya T.*

*reserve lieutenant colonel, teacher of the cycle of combined arms training, Military Medical Faculty,*

*Mkhitar Heratsi Yerevan State Medical University (Yerevan, RA)*

**Abstract.** The purpose of the article is to present the experience of introducing “military leadership” in the Armed Forces of the Republic of Armenia and the ways of further development. Any knowledge, including advanced training, that a serviceman receives during his service, is included in his professional training program.

Military leaders guide by their character traits, personal example and always acted as pioneers through their activities aimed at continuous training, development and professional growth. They achieve perfection when their subordinates complete their military duty in a disciplined manner, perform the tasks assigned to them, and are guided by existing military values and traditions. The phrase “military leader” can be understood in two ways. Firstly, when we mean the

leader, in general, as the worldview, the value system, the self-esteem of the subject of leadership (military collective), the internal understanding of their own activities. Secondly, leadership itself is considered as a certain social activity, a type of interpersonal communication.

**Keywords & phrases:** military leadership, task management, armed forces of the Republic of Armenia

### Ներածություն

Հիմնվելով արևմտյան առաջավոր փորձի հիման վրա 2011 թվականին Հայաստանի ՉՈՒ-ի մարտական պատրաստության ծրագրում որպես առանձին առարկա ներդրվեց, «առաջնորդություն» (leadership) տեսության առանձին ճյուղ հանդիսացող «զինվորական առաջնորդությունը» (military leadership) [1, էջ 87]: Անհրաժեշտ է ընդգծել, որ «զինվորական առաջնորդության» առավել բնորոշ առանձնահատկություններից այն է, որ յուրաքանչյուր հրամանատար պետք է լինի և՛ կառավարիչ և՛ առաջնորդ, ով հիմնականում գործելու է բարդ իրավիճակներում: Հայաստանի զինված ուժերի ռազմական կրթության զարգացման համատեքստում, անհրաժեշտ է ընկալել, որ արևմտյան երկրների զինված ուժերում «զինվորական առաջնորդությունը» հանդիսանում է ռազմակրթական ծրագրերի այն կարևոր բաղադրիչը, որը պետք է ապահովի հրամանատարական կազմի կողմից «առաջադրանքային կառավարում» (mission command) [2, էջ 127] տեսության իրականացումը:

Սրանով պետք է հասկանանք, որ առանց ռազմական առաջնորդության լիարժեք ընկալման և զարգացման, անհնար է «առաջադրանքային կառավարման» տեսության իրականացումը:

««*Չինվորական առաջնորդությունը*»՝ նպատակային ազդեցություն է զինծառայողների հանդեպ ամենօրյա, ծառայողական, ուսումնական և մարտական գործունեության ժամանակ, ինչպես նաև անձնակազմի հանդեպ ոչ տրանզիտ իրավիճակներում՝ պահպանելով վստահությունն ու հարգանքը, ապահովելով նպատակը, դրան հասնելու ուղիները, կարգապահությունը և շարժառիթը առաջադրանքներ կատարելու համար» [3]: Իհարկե պետք է հստակ հասկանալ նաև, որ միայն «զինվորական առաջնորդության» ներդրումը չի կարող ապահովել «առաջադրանքային կառավարում» փիլիսոփայության զարգացումը Հայաստանի Հանրապետության ՉՈՒ-ում, քանի որ «առաջադրանքային կառավարում»-ը առավել նպատակահարմար է կառավարման հորիզոնական համակարգ ունեցող զինված ուժերում կիրառման համար, ինչպես նաև անչափ կարևոր է պետերի և ենթակայների միջև փոխադարձ վստահության գործոնը, առանց որի տվյալ հայեցակարգը չի կարող կյանքի կոչվել: Հայաստանի զինված ուժերում դեռևս գործում է խորհրդային մոդելի խիստ ընդգծված ուղղահայաց կառավարման համակարգը: Հետևաբար

ստացվում է, որ փորձ է արվում ներդնել մի տեսություն, որն ինքնին հակասում է ՀՀ ՉՈՒ կառավարման մոդելին: Այստեղ ամենևին խոսքը չի գնում այն մասին, որ այդ տեսությունը անընդունելի է մեզ համար: Խոսքը այն մասին է, որ այն պարզապես պատճենահանմամբ չի կարող կիրառվել իրեն հակասող մոդելում: Այդ իսկ պատճառով, նախ պետք է կատարվեն համապատասխան իրավական և կառուցվածքային փոփոխություններ ՀՀ ՉՈՒ-ին վերաբերվող օրենքներում և մարտական փաստաթղթերում: Ամենայն հավանականությամբ, վերը նշված պատճառները հանդիսացել են կարևոր գործոն Հայաստանի Հանրապետության բանակի կերպավորման հայեցակարգի [4] ընդունման համար:

### Չինվորական առաջնորդության ներդրումը ՀՀ ՉՈՒ-ում

«Նա, ով չի հնազանդվում, չի կարող հրամայել»  
Բենջամին Ֆրանկլին

«Չինվորական առաջնորդություն» տեսությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում սկսվեց ուսումնասիրվել 2011 թվականից: Առաջին քայլը սկսվեց Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտից<sup>1</sup>, որտեղ ներդրվեց «Առաջնորդում և կառավարում» առարկան՝ առաջին տարում միայն կուրսանտական անձնակազմի համար, իսկ հաջորդ տարիներին նաև սպայական վերապատրաստման դասընթացներում և հրամանատարաշտաբային ֆակուլտետում: Ռազմական ինստիտուտում այդ ժամանակ կազմավորվեց «Չինվորական առաջնորդության և կառավարման» ցիկլ: Դասավանդման նախնական ծրագրերը մշակվեցին հիմք ընդունելով ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Գերմանիայի, Իտալիայի և մի շարք այլ արևմտյան երկրների ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերը, ինչպես նաև «Համագործակցություն հանուն խաղաղության» կոնսորցիումի կողմից գործընկեր երկրների հետ համատեղ մշակված հրամանատարական կադրերի պատրաստման ուղեցույց ծրագիրը [5]: 2012 թվականին տպագրվեց «Չինվորական առաջնորդության» ուսումնական ձեռնարկ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի անձնակազմի համար [6]: Այս ձեռնարկը հիմք հանդիսացավ ՀՀ ՉՈՒ մարտական պատրաս-

<sup>1</sup> Ներկայումս՝ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա:

տության ծրագրերում «Չինվորական առաջնորդություն» դասընթացի ներդրմանը [7, էջ 13], որը ընդգրկվեց նաև զինված ուժերի հրամանատարական պատրաստության ծրագրերում:

Այսօր «Ռազմական առաջնորդություն» առարկան ներառված է Վ. Մարգարյանի անվան ռազմական ակադեմիայի բոլոր ինստիտուտների և ֆակուլտետների, Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետի, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի ռազմական ամբիոնի, ենթասպաների դպրոցի ուսումնական ծրագրերում, ինչպես նաև ՀՀ ՁՈՒ կրտսեր ենթասպայական դպրոցներում, ինչպես նաև Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում դասավանդվում է «Ռազմավարական առաջնորդություն» դասընթացը:

Պետք է ասել, որ ընդհանուր առմամբ Հայաստանի ռազմաուսումնական հաստատություններում «Չինվորական առաջնորդության» դասընթացը մնացել է դասավանդման լրացուցիչ առարկա, որի ժամանակ ունկնդիրները ծանոթանում են «Չինվորական առաջնորդության» հիմնադրությունների հետ:

Սակայն Հայաստանի Հանրապետության «Բանակի կերպավորման հայեցակարգ»-ի ռազմական կրթությանը վերաբերվող բաժնում հստակ արձանագրված է, որ ռազմական առաջնորդություն առարկան անհրաժեշտ է դիտարկել կարևորագույնների ցանկում [4, էջ 20]:

**Հայաստանի Հանրապետության ՁՈՒ-ում առաջնորդության ներդրման կարևորության մասին**

*«Առաջնորդության իրական չափանիշը ազդեցությունն է, ոչ՝ ավել, ոչ՝ պակաս:*

*Առաջնորդությունը զարգանում է օրեցօր, այլ ոչ թե մեկ օրում»*

Ջոն Մաքսվել

ՀՀ ՁՈՒ բարեփոխման հիմնական, ռազմավարական խնդիրն է ստեղծել հզոր, շարժունակ և արդյունավետ զինված ուժեր, որոնք համապատասխանում են 21-րդ դարի պահանջներին, ժամանակակից մարտահրավերներին և սպառնալիքներին:

Ներկայումս, բարեփոխումների շահերից ելնելով, կատարվել են լայնածավալ կազմակերպչական և կադրային փոփոխություններ, իրականացվում է անցում զինված ուժերի համալրմանը պայմանագրային զինծառայողներով (Պաշտպան հայրենյաց) [8], սպայական կազմի համալրման ինտեգրված ծրագրին (Պատիվ ունեմ) [9]: Մինևույն ժամանակ, ուժային կառույցների համալրման նոր մեթոդը պահանջում է զինծառայողների այս կատեգորիայի ուսուցման, վերապատրաստման և զինվորական դաստիարակության նոր մոտեցումներ: Դրա

նպատակն է նախապատրաստել այնպիսի ապագա հրամանատարի և զինծառայողի, ով կատարելու է զինվորական կոլեկտիվի ղեկավարի գործառնությունները, ձեռք է բերելու հեղինակություն իր ենթակաների շրջանում, համախմբելու է մարդկանց և ուղղորդելու է նրանց՝ արդյունավետորեն կատարելու ծառայողական պարտականությունները: Առաջնորդության ունակությունն ու պատրաստակամությունը թույլ կտան պայմանագրային զինծառայողին առավել հաջողությամբ հարաբերություններ կառուցել ենթակաների հետ, ողջ ծավալով իրականացնել իր հրամանատարական և կրթական հմտությունները: Ըստ էության այս հարցերը ամբողջությամբ ընդգրկված են «Բանակի կերպավորման հայեցակարգում», որը ուղղված է այս, ինչպես նաև այլ կարևոր խնդիրների լուծմանը:

Վորիիշյալ խնդիրների արդիականությունը պայմանավորված է գորակոչով զինվորական ծառայություն անցնող զինծառայողների արհեստավարժության ցածր մակարդակով, հոգեբանական և մանկավարժական բնույթի խնդիրների բարդությամբ: Հետևաբար, ապագա հրամանատարը անշուշտ, պետք է ունենա առաջնորդի որակներ, պատրաստ լինի առաջնորդության գործունեության՝ ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի ժամանակ: Բացի այդ, ձևավորված առաջնորդության որակներ ունեցող զինծառայողը առավել հաջողությամբ է կատարում իր ֆունկցիոնալ պարտականությունները, նրան կարելի է ավելի պատասխանատու առաջադրանք վստահել, նա դառնում է իսկական օրինակ իր ծառայակից ընկերների համար, ի վիճակի է արդյունավետ ազդեցություն ունենալ երիտասարդ զինվորների վրա և հեղինակավոր ազդեցություն ունենալ ենթակաների վրա:

Չորքերի կառավարման ցանկացած մակարդակում, զինվորական առաջնորդի նպատակը իր զինվորական պարտքի իրականացումն է հարեւնիքի հանդեպ, հիմնվելով մասնագիտական արհեստավարժ գիտելիքների վրա: Չինվորական առաջնորդի էությունը բացահայտվում է ենթակաների վրա ազդելու գործընթացում՝ նպատակի հստակ ձևակերպմամբ, նպատակին հասնելու ուղիների որոշմամբ, ենթակաների հետ հաղորդակցման արդյունավետ միջոցների կիրառմամբ, հանձնարարնաժ առաջադրանքի նախապատրաստման և կատարման ընթացքում սեփական օրինակով ենթակաների ոգեշնչմամբ, մարտունակության բարձրացմամբ, անձնակազմի համախմբմամբ: Չինվորական առաջնորդը ենթակաների կողմից ընդունված հեղինակություն է, որը տալիս է առաջնորդին իրավունք ցանկացած պարագայում ընդունել որոշումներ, ինչը թույլ կտա ապահովել առաջադրանքի հաջող կատարումը, կհամախմբի անձնակազմին ընդհանուր նպատակի շուրջ, խորա-

մուխ լինելով յուրաքանչյուր զինծառայողի կարիքներում, առաջնորդելով դեպի նպատակ, մասնագիտական հմտությունների հետագա կատարելագործման միջոցով: Նպատակին հաջողությամբ հասնելու համար զինվորական առաջնորդը պետք է ձևավորի բարձր բարոյահոգեբանական մթնոլորտ և կարողանա ազդեցություն ունենա իր ենթակաների վրա, բարձրացնել անհատական և ստորաբաժանման մարտական ունակությունները, ապահովելով ամուր և կուռ ստորաբաժանում, որը պատրաստ կլինի գործելու ամենաբարդ իրավիճակում:

Մարտական իրադրությունը բնութագրվում է կյանքին սպառնացող և վտանգավոր լի պայմաններով: Չինվորական առաջնորդների կողմից սթրեսային իրավիճակները հաղթահարելու համար անհրաժեշտ է ամբողջ անձնակազմի մասնագիտական հմտությունների, կամային ջանքերի և համակարգված թիմային աշխատանքի լավագույն համադրություն: Որոշումների կայացումը և մարտական պայմաններում դրանց հետևանքների համար պատասխանատվության բարձր մակարդակը զինվորական առաջնորդների ձևավորման, կայացման և զարգացման հիմնական գործոններից են: Չորքերի կառավարման հաջող իրականացման հիմնական պայմաններն են՝ մասնագիտական հմտությունների բարձր մակարդակը, հավաքական փոխադարձ հարգանքի ձևավորումը, մարտական իրադրությունում և խաղաղ ժամանակ բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծումը, համերաշխության և զինվորական հարգանքի օրինակների ցուցադրումը, առաջադրված նպատակին հասնելու շարժառիթները, հարաբերություններում բացության և անկեղծության դրսևորումը՝ հիմնված փոխհարաբերությունների հաստատման վրա:

Առաջնորդ հրամանատարին կարելի է հանձնարարել պատասխանատու մարտական առաջադրանք, իսկ բարդ իրավիճակում նա կարող է փոխարինել իր հրամանատարին: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է ողջամտորեն որոշել զինծառայողների գործնական գործունեության համար առաջնորդության երևույթի նշանակության հիմնական դրույթները.

1. «Առաջնորդ» և «առաջնորդություն» հասկացությունների և այս երևույթի էության վերլուծությունը թույլ է տալիս պայմանագրային զինծառայողների ռազմական մասնագիտական գործունեության հետ կապված քննարկվող հասկացությունների կոնկրետ սահմանումներ տալ.

- «Չինվորական առաջնորդ» - խմբի, զինվորական կոլեկտիվի անդամ է, որին վստահում են ամենակարևոր և պատասխանատու որոշումներ կայացնելու բացառիկ իրավունքը [6, էջ 44]:

- «Չինվորական առաջնորդությունը» - հրամանատարի ազդեցությունն է զինվորական կոլեկտիվի վրա, որը հիմնված է արժանիորեն ճանաչված հեղինակության, առաջնորդի որակների և կարողությունների վրա, զինվորական կոլեկտիվի ընդհանուր ռազմական և ծառայողական առաջադրանքի լավագույն և արդյունավետ կատարման հասնելու համար հետևորդների ջանքերը կենտրոնացնելու ունակությունն է:

2. «Չինվորական առաջնորդի» դերի կարևորությունը զինվորական կոլեկտիվում, ստորաբաժանումում կայանում է՝ ստորաբաժանման անդամներին համախմբելը և նրանց համախմբվածությունը պահպանելը, ուսումնական և մարտական խնդիրների որակյալ կատարման, զինվորական ծառայության օրինակելի իրականացման, զինվորական կարգապահության ամրապնդման ուղղությամբ խմբի ուղղորդման, հրամանատար առաջնորդի ծառայության մեջ վաստակած հեղինակության և օրինականության վրա հիմնված միանձնյա դեկավարման սկզբունքի հուսալի պահպանման ապահովման մեջ:

Կրտսեր հրամանատարական կազմի պաշտոնական առաջնորդները պատասխանատու են ջոկի, դասակի, վաշտի համար և հանդիսանում են զինվորների անմիջական պետեր: Նրանք ուղիղ շփում են ունենում ենթակաների, պաշտոնակիցների և վերադաս հրամանատարության հետ: Կրտսեր հրամանատարները անմիջական ազդեցություն ունեն նորակոչիկ զինվորների վրա: Հաճախ նորակոչիկ զինվորներ մոտ նկատվում է կարգապահության խախտման դեպքեր: Կարգապահության հաճախակի խախտումները խաթարում են ստորաբաժանման համախմբվածությունը: Որն էլ կարող է խանգարել ստորաբաժանման առաջ դրված խնդիրների կատարմանը: Որոնք են այս պարագայում կրտսեր հրամանատարների դերն ու պարտականությունները որպես առաջնորդ, կանխարգելելու իր ենթակա զինծառայողների կարգապահական խախտումների և ստորաբաժանման համախմբվածության համար: Այսպես, ուսումնասիրելով ԱՄՆ բանակի FM 6-22 Army Leadership [10] կանոնադրություն առաջին գլուխը տեսնում ենք թե ինչպես հրամանատարական կազմի որպես առաջնորդի զարգացումը և գործողությունները կարող են նպաստել ավելի համախմբված միջավայրի ստեղծմանը: Համաձայն FM 6-22-ի, հրամանատարները պետք է կարողանան ինքնուրույն որոշումներ կայացնել՝ օգտագործելով առողջ դատողությունը՝ հիմնված բարոյական սկզբունքների վրա: Չորակոչվելով ժամկետային զինվորական ծառայության կամ պայմանագրային հիմքով զինվորական ծառայության անցնելով զինծառայողները անընդհատ ստանում են նոր գիտելիքներ և ուսուցանվում են

լինել արհեստավարժ զինվոր իրենց անմիջական հրամանատարից: Կրտսեր հրամանատարները շատ ժամանակ են անցկացնում զինվորների հետ, նրանք քնում են նույն զորանոցում, սնվում են միասին, խաղաղ ժամանակ զբաղվում են մարտական պատրաստությամբ: Եվ այս շարունակական գործընթացը, կրտսեր հրամանատարին իր ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումում համախմբվածության և վստահությունն ձևավորելու մթնոլորտ ստեղծելու կարևոր նախապայման է:

Համաձայն ԱՄՆ բանակի դաշտային կանոնադրություն (FM 6-22 Army Leadership) «Առաջնորդների զարգացում» ենթաբաժնի, զինվորական առաջնորդի զարգացման հիմնական սկզբունքներն են.

- Հստակ գիտակցումը և նվիրվածությունը առաջնորդության զարգացմանը:

- Հստակ պատկերացում, թե ինչ, երբ և ինչպես զարգացնել առաջնորդության որակները:

- Աջակցող հարաբերություններ ենթակաների հետ և ուսուցման մշակույթի զարգացում:

- Երեք փոխարացնող ոլորտներ (համակարգ, գործողություն և ինքնազարգացում), որոնք ապահովում են կրթություն, ուսուցում և փորձ:

ԱՄՆ զինված ուժերը ADP 7-0 (Army Doctrine Publication) [11] կարևորում է ապագա առաջնորդների զարգացման յոթ սկզբունքներ՝

1. Անձնական օրինակ:

2. Հայտնաբերել ենթակաների մեջ առաջնորդներ:

3. Ստեղծել կրթական միջավայր ապագա առաջնորդների համար:

4. Մովորեցնել առաջնորդներին հանդես գալ որպես ապագա հրամանատարներ:

5. Մարզվել, որպեսզի առաջնորդների մոտ զարգանա հարմարվողականությունը:

6. Մովորեցնել առաջնորդներին մտածել ստեղծագործորեն և քննադատաբար:

7. Մովորեցնել հրամանատարներին ավելի լավ ճանաչել իրենց ենթականերին և նրանց ընտանիքներին:

Պրոֆեսիոնալ զինվորական անձնակազմը պետության զինված ուժերի ամրության գրավական է: ՆԱՏՕ-ի պետությունների զինված ուժերի չափանիշների համապատասխան՝ հիմնական ռազմական առաջնորդի որակների զարգացման հայցեկարգը «Լինել-Գիտենալ-Կարողանալ» «BE-KNOW-DO» [12] հասկացողությունն է:

Ըստ հայցեկարգի զինվորական առաջնորդությունը սկսվում է նրանից, թե ով պետք է «լինի» առաջնորդ: Այսինքն՝ սահմանելով այն արժեքները, որոնք ձևավորում են առաջնորդ-զինծառայողին որպես անհատ: Իրականում դրանք այն ներքին որոշիչ հասկացողություններն են, որոնց նա միշտ տիրապետել է, մենք կարող ենք դիտարկել ներքին բարոյահոգեբանական

որակներն ու հատկությունները, որոնք բնորոշում են նրան որպես անհատ: Այս արժեքներն ու սկզբունքները նույնն են բոլոր զինվորական առաջնորդների համար՝ զինվորից մինչև գեներալ, անկախ պաշտոնից:

Հայցեկարգի «Գիտենալ» հասկացությունը գիտելիքի առկայությունն է, որը նա պետք է օգտագործի իր կառավարչական գործընթացի ժամանակ: Ռազմական առաջնորդը պարտավոր է անընդհատ բարձրացնել իր գիտելիքների մակարդակը, մարտավարության, ռազմական տեխնիկայի, ստորաբաժանումների ղեկավարման, ռեսուրսների կառավարման, ենթակաների վարքագծի և կարիքների վերաբերյալ: Գիտելիքը՝ հմտությունների ու կարողությունների, արժեհամակարգի և բնավորության գծերի ամբողջություն է, որը ձեռք է բերված սեփական փորձի հիման վրա: Մասնագիտական գիտելիքներից, հմտություններից և կարողություններից մինչև որոշումների կայացման ընթացակարգեր և հրամանատարական ունակություններ: Մասնագիտական արհեստավարժության չափանիշները վերաբերելի են ողջ անձնակազմին և զինվորական առաջնորդներին: Այնուամենայնիվ, եթե զինվորական առաջնորդը զբաղեցված հաստիքում կրում է մեծ պատասխանատվություն, ապա նա պետք է տիրապետի լրացուցիչ մասնագիտական հմտությունների ու կարողությունների, և այս դեպքում մասնագիտական հմտությունների չափանիշները նույնպես փոխվեն: Չինվորական առաջնորդի մասնագիտական հմտությունը զինվորական առաջնորդության տարբեր մակարդակներում կտարբերվեն միմիանցից: Գիտելիքները ձեռք է բերում ինքնուրույն և ամրապնդում է գործնական կիրառմամբ:

«Կարողանալ» հայցեկարգի մաս կազմող հրամանատարները չեն կարող լինել արդյունավետ, քանի դեռ չեն օգտագործում ծառայողական պարտականությունների ժամանակ այն, ինչ գիտեն: Ունակությունները ու գիտելիքները, թեև դրանք չափազանց անհրաժեշտ են զինվորական առաջնորդության համար, սակայն բավարար չեն: Չինվորական առաջնորդությունը չի կարող արդյունավետ լինել, քանի դեռ գործնականում չի կիրառել այն, ինչ գիտի և կարող է անել: Չինվորական առաջնորդը զբաղեցնելով տարբեր պաշտոններ, ձեռք է բերում առաջնորդության մեծ փորձ և իր գործողություններով կարող է ազդել ենթակաների վրա, դրանով իսկ ապահովելով առաքելության իրագործումը:

### Եզրակացություն

Վերը նշված դրույթները թույլ են տալիս եզրակացել, որ ժամանակակից պայմաններում ռազմական և մասնագիտական գործունեության ընթացքում ժամկետային և պայմանագրային զինծառայողների մեջ առաջնորդության որակների ձևավորումը ոչ միայն հնարավոր է, այլև

անհրաժեշտ պարտադիր պայման է նրա մասնագիտական պարտականությունները կատարելու պատրաստակամության համար: Առաջնորդությունը կարևոր տարր է և հնարավորության դեպքում պետք է ուսումնասիրել առաջավոր փորձը և կատարելագործել սեփական ունակությունները: Հրամանատարը առաջնային դեր ունի զինվորական կոլեկտիվում: Առաջնորդ հրամանատարն արդյունավետորեն կարող է ազդել իր ենթակաների վրա՝ սահմանելով չափանիշներ, նպատակներ, առաջնահերթություններ և դրանց հասնելու ուղիները: Չինվորական առաջնորդը պետք է ունենա հատուկ տեսական և գիտենա թե ինչպես իրականացնել այն, դրսևորի արհեստավարժություն՝ իր օրինակով ենթականերին ոգեշնչի գործողության: Տիրապետի հստակ բանավոր խոսքի, ենթականերին լսելու կարողության և կիսի ընդհանուր ածեքները ենթակաների հետ: Չինվորական առաջնորդը ուղղակիորեն ազդում է զինվորական կոլեկտիվի ծառայողական պարտականությունների կատարման արդյունավետության վրա: Այս առումով, պայմանագրային զինծառայողի համար առաջնորդության որակների ձևավորումը ոչ միայն անհրաժեշտ, այլև պարտադիր պայման է: Ըստ այդմ, «Չինվորական առաջնորդություն» և «Առաջադրանքային կառավարում» դասընթացները պետք է զուգահեռ դասավանդվեն ռազմաուսումնական հաստատություններում, ընդգրկվեն որպես մասնագիտական առարկաներ, որի արդյունքում կբարձրանա մասնագիտական պատրաստվածության մակարդակը, կզարգացնի անձնակազմի բարոյական և հոգեբանական կարողությունները, կբացահայտի բանակի մարտական ավանդույթների ազգային և հոգևոր ներուժը, կպահպանի հոգեբանական պատրաստվածությունը:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. **Հայրապետյան Ա. Վ.**, «Չորքերի կառավարման արդիական եղանակը և զինված ուժերում դրաներըրման խոչընդոտները» // «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես: - Երևան, 2023, հմ. 2 (116) :

2. **Զիլինդարյան Գ. Ս., Զիլինգարյան Թ. Գ., Փիրոյան Բ. Վ.** «Հրամանատրում աջադրանքի միջոցով». Ինչերե՞ն է» // «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես: - Երևան, 2023, հմ. 2 (116)

3. «Ուկրաինայի զինված ուժերում զինվորական առաջնորդության զարգացման դոկտրինա», Ուկրաինայի ՉՈւ ԳՇ, 2020 թ.: <https://u.to/nI8kIg> (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը: 12.03.2025)

4. Հայաստանի հանրապետության բանակի կերպավորման հայեցակարգ: <https://u.to/D5AkIg> (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը: 12.03.2025)

5. Generic Officer Professional Military Education REFERENCE CURRICULUM. - Կինգստոն, 2011 թ.: <https://surli.cc/qaiubu> (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը: 12.03.2025)

6. **Աթանեսյան Ա. Վ., Ճաքարյան Ա. Կ., Ավետիքյան Վ. Հ., Ավետիսյան Ա. Ռ., Հարությունյան Գ. Կ.** «Չինվորական առաջնորդություն» ձեռնարկ ՀՀ զինված ուժերի անձնակազմի համար: - Երևան, 2012: <https://surli.li/nkfdbq> (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը: 12.03.2025)

7. **Օհանյան Ս. Մ.**, «Պաշտպանական բարեփոխումների համատեքստում զինվորական կարգապահության ամրապնդումը պետության աշխարհում ու բանակաշինության արդիական տեսությունների հաշվառմամբ» // «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես: - Երևան, 2014, հմ. 3-4:

8. Հայաստանի Հանրապետության կառավարության 09.02.2023 թվականի N 160-Ն որոշում: <https://surli.li/achmcx> (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը: 12.03.2025)

9. Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2018 թվականի N 430-Ն որոշում: <https://surl.gd/fycrxg> (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը: 12.03.2025)

10. <https://surl.li/qnbhva> (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը: 12.03.2025)

11. <https://surl.li/mkybph> (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը: 12.03.2025)

12. <https://surl.li/yzmgghz> (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը: 12.03.2025)

Տժանա/Հանձնվել է՝ 12.03.2025  
 Рецензирована/Գրախոսվել է՝ 19.03.2025  
 Принята/Ընդունվել է՝ 26.03.2025